ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի N 12-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Իրավական ակտի անհրաժեշտությունը

«Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 19-ի N 12-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ մասի և 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի պահանջների կատարմամբ՝ աշխատանքային գործունեության մեջ դիտարկված բացթողումները հաշվի առնելով, դրանք շտկելու անհրաժեշտությամբ:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները.

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված է, որ համայնքի խնդիրները լինում են պարտադիր և կամավոր: Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 19-ի N 12-Ն որոշման մեջ, օրենքին համապատասխան, սահմանվել են Ջերմուկ համայնքի կամավոր խնդիրները և դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և իրականացման կարգը: Աշխատանքային գործունեության ընթացքում դիտարկվել են բազմաթիվ իրավիճակներ, որոնց դեպքում հնարավոր չի լինում միանշանակորեն մոտենալ խնդրի լուծմանը, հատկապես, երբ այդ խնդիրը համայնքի բնակչին ֆինանսական աջակցություն ցուցաբերելն է: Վերախմբագրվել են համայնքի կամավոր խնդիրները. դրանց ցանկում ավելացվել են կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքներին (անձանց), Ջերմուկ համայնքի վարչական տարածքից զինծառայության զորակոչված զինծառայողներին ծառայության վայրում տեսակցելու նպատակով վերջիններիս ընտանիքների անդամներին (եթե տվյալ ընտանիքը հաշվառված է սոցաջակցության տարածքային բաժնի կողմից որպես անապահով) սոցիալական օգնության տրամադրումը, սոցիալական ծրագրերի իրականացմանը և սոցիալական պաշտպանության խնդիրներ իրականացնող հասարակական կազմակերպությունների գործունեությանն աջակցելը, երիտասարդության ռազմահայրենասիրական և կրթամշակութային դաստիարակությանն աջակցելը: Գործող Կարգի համաձայն աջակցություն էր ցուցաբերվում պետական բարձրագույն և (կամ) միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում, ոչ պետական ուսումնական հաստատություններում (պետական հավատարմագրում ունեցող մասնագիտությունների գծով) սովորող համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողների ուսման վարձի վճարման համար՝ տարեկան մեկ անգամ, առաջարկվող խմբագրմամբ սահմանվել է, որ այդ սոցօգնությունը պետք է տրամադրվի ուսումնական տարվա ընթացքում մեկ անգամ: Փոփոխման է ներկայացվում նաև համայնքի բնակչի հուղարկավորության համար ընտանիքին տրամադրվող սոցօգնության գումարի չափը՝ 100 000 դրամը փոխարինելով 40 000 դրամով: Առաջարկվում է վերախմբագրում կատարել նաև կամավոր խնդիրների լուծման չափորոշիչների ցանկում՝ ավելացնելով կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելը, անհետաձգելի լուծում պահանջող՝ կյանքին և

առողջությանը վտանգ սպառնացող դեպքերը, միակողմանի կամ երկկողմանի ծնողազուրկ, ծնողական խնամքից փաստացի զրկված, հաշմանդամության կարգ ունեցող երեխա լինելը, մարտական գործողությունների (պարտականությունների) կատարման ժամանակ զոհված կամ հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողի անապահով ընտանիքների կարգավիճակում գտնվելը, երկարատև կամ անսպասելի վրա հասած և տևական բուժում պահանջող հիվանդությունը և այլն: Որոշման նախագծով առաջարկվում է կամավոր խնդիրների իրականացման համար համայնքի բյուջեից հատկացվող ֆինանսական միջոցների չափը սահմանել տվյալ տարվա համայնքի բյուջեով նախատեսված սեփական եկամուտների 5%-ի չափով:

3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը.

«Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 19-ի N 12-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» համայնքի ավագանու որոշման նախագիծը ընդունելու արդյունքում ակնկալվում է ապահովել համայնքային կյանքի բնականոն ընթացքը ուղղակիորեն չպայմանավորող խնդիրների լուծումը: Մասնավորապես, տեսակարար կշռով մեծ տեղ են զբաղեցնում բնակիչների սոցիալական խնդիրների լուծմանն ուղղված լիազորությունների սահմանումը, ինչը ենթադրում է թեթևացնել սոցիալական աջակցության կարիք ունեցող անձանց և ընտանիքների սոցիալապես ծանր վիճակը՝ միաժամանակ արդյունավետ և հիմնավորված տնօրինելով համայնքի բյուջեի միջոցների այն մասը, որը պլանավորվում է համայնքի կամավոր խնդիրների լուծման համար համայնքի ՏԻՄ-ի սեփական լիազորություններն իրականացնելու համար:

4. Իրավական ակտի նորմատիվ բնույթի հիմնավորվածությունը

«Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 19-ի N 12-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» համայնքի ավագանու որոշման նախագիծը կրում է նորմատիվ բնույթ, քանի որ պարունակում է վարքագծի պարտադիր կանոններ համայնքի վարչական տարածքում անորոշ թվով անձանց համար և ուղղված է սոցիալական աջակցության տրամադրման հետ կապված հարաբերությունները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի N 12-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 19-ի N 12-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտեր ընդունելու անհրաժեշտություն չկա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի N 12-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 19-ի N 12-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Ջերմուկ համայնքի բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**